ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«11» 08 2025թ. N 1087 – Լ

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 1599-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի հունիսի 10-ի «Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու վերաբերյալ ներկայացված հայտի և կից

փաստաթղթերի ուսումնասիրության ընթացակարգը և հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 1599-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) հրամանի N 2 հավելվածի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) համապատասխան ստորաբաժանման ղեկավարներ կամ մասնագետներ, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության մասնագետ, «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագետ, ինչպես նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանից գիտական աստիճան ունեցող գիտական աշխատող (համաձայնությամբ):»:

3) հրամանի N 2 հավելվածի 6-րդ կետում «դրան» բառը փոխարինել «նիստին» բառով:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի 11 հունիսի **-ի**

N 2087 **-L հրամանի**

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի հունիսի 10-ի

N 1599 -L հրամանի

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆԻՆ) ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ և ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության անասնաբուժության բաժնի պետ կամ գլխավոր անասնաբույժ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության սննդամթերքի անվտանգության բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության բուսասանիտարիայի բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության մասնագետ

ՀՀ էկոնմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագետ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական աստիճան ունեցող գիտական աշխատող (համաձայնությամբ)»: